ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ապահովագրվում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուետ՝ Բանկ) վարկերի շրջանակներում ձեռք բերված էլեկտրական տեխնիկան (ներառյալ համակարգիչներ), սանտեխնիկան, մարտկոցները և կահույքը հրդեհից, բնական աղետներից և այլ վտանգներից:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փ. 51, 53, Տարածքներ 47, 48, 50
Հեռ.՝ (+374 10) 59 21 21
Կայք՝ www.ingoarmenia.am

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- Հրդեհ, պայթյուն, կայծակի հարված,
- Վնասվածք ջրից,
- Տարերային աղետներ (բացառությամբ երկրաշարժի), այդ թվում՝ հողմ, փոթորիկ, մրրիկ, հողմապտույտ, ջրհեղեղ, հրաբխի ժայթքում կամ ստորգետնյա բնական կրակի ներգործություն, սողանք, հեղեղ, լեռնային փլուզում,
- Մեխանիկական վնասներ,
- Կոտրանքով գողություն, ավազակություն,
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ,
- Էլեկտրական սարքավորումների վթար:

ՈՐՔԱՆ Է ԿԱՉՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 28.06.13թ. հաստատված «Հրդեհից և այլ վտանգներից գույքի ապահովագրության կանոններ»-ում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ և ԼՂՀ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Շարժական գույքի շուկայական (ձեռք բերման) արժեքի չափով:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Ապահովագրական գումարի 1 %, սակայն ոչ պակաս, քան 5,000 ՀՀ դրամը:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի դեպքում անհապաղ վանգահարել + (374 10) 59 21 21 հեռախոսահամարով,
- Պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմնին (գողության, կոտրանքի, թալանի կամ երրորդ անձանց կողմից գույքի կանխամտածված (միտումնավոր) ոչնչացման կամ վնաս հասցնելու դեպքում՝ Ոստիկանություն, հրդեհի դեպքում՝ ԱԻՆ և այլն),
- Ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ապահովագրության օբյեկտի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո դիմել ապահովագրական ընկերության վանգերի կենտրոն հատուցման դիմում լրացնելու նպատակով և լրացված դիմումի լուսապատճենը կամ լուսանկարն ուղարկել dimum@ingoarmenia.am էլ.հասցեին կամ VIBER հավելվածով՝ (+374 44) 410 723 հեռախոսահամարին,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 30 օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Ջերմային վերամշակման ընթացքում գույքին հասցված վնասը,
- Սարքավորման արտադրման և/կամ մոնտաժման կամ տեղադրման ժամանակ թույլ տրված սխալների հետևանքով գույքին հասցված վնասը,
- Գործարկման-փորձարկման ժամանակ թույլ տրված սխալների հետևանքով գույքին հասցված վնասը,
- Բնական մաշվածությունը, կոռոզիայի ազդեցությունը, ապրանքային արժեքի կորուստը, արտադրական (գործարանային) խոտանը,
- Գույքի դետալների վերանորոգումը կամ փոխարինումը, եթե դրանց վնասումը ապահովագարական պատահարի արդյունք չէ, կամ աշխատանքների իրականացումը, որոնց տեխնոլոգիական անհրաժեշտությունը չի եղել,
- Էլեկտրոնային տվյալներին և/կամ ծրագրերին (այդ թվում՝ համակարգչային) պատճառված վնասը,
- Ծրագրային սխալների կամ ծրագիր ոչ արտոնված մուտք գործելու հետևանքով պատճառված վանսը,
- Խոնավության, բորբոսի, գոլորշիների ազդեցության հետևանքով պատճառված վնասը, ջերմաստիճանի կամ ջերմային ռեժիմի չպահպանման, փոփոխման հետևանքով հասցված վնասը,
- Գույքի վարձակալության պայմանագրով վարձակալի գործողությունների (անգործության) արյունքում առաջացած վնասը կամ կորուսը,
- Բաց թողնված օգուտը, վարձակալված գույքի օգտագործման վճարը, գույքի օգտագործման անհնարինության հետևանքով առաջացած ծախսերը և այլն,
- Վնաս, որը հասցվել է գույքի սեփականատիրոջ (ապահովագրված անձի) կամ նրա հարապատների կողմից կամ մասնակցությամբ,
- Ապահովագրված գույքի ներկաշերտի վնասվածքը, քերծվածքները, բծերը և այլն,
- «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից 28.06.13թ. հաստատված «Հրդեհից և այլ վտանգներից գույքի ապահովագրության կանոններ»-ում սահմանված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- **Մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը առանց ապահովագրական ընկերության համաձայնության չի թույլատրվում իրականացնել ապահովագրված գույքի վերանորոգման որևէ աշխատանք, անհրաժեշտ է պահպանել վնասված գույքի մասերը կամ մնացորդները,**
- **Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:**

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: